

01.06.2017թ.

Մևան համայնքի ղեկավար Մարգիս Մուրադյանի շնորհավորական ուղերձը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ

Այսօր հունիսի 1-ն է՝ ամռան առաջին օրը , որը միաժամանակ ազդարարում է բոլորիս համար սիրված ու սպասված տոնի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա մասին:

Միրելի երեխաներ

Այս և տարվա բոլոր օրերը ձերն են, ու մեծահասակները շատ կարևոր առաքելություն ունեն՝ պաշտպանել ձեր իրավունքներն ու լավագույն շահերը՝ ձեր մանկությունը դարձնելով լիարժեք և ապահով:

Հարգելի ծնողներ, մեծահասակներ

Երեխաների երջանիկ մանկության համար պատասխանատու ենք բոլորս, և յուրաքանչյուրն իր տեղում, իր հնարավորությունների և լիազորությունների սահմաններում պետք է փորձի երեխաների համար ստեղծել ներդաշնակ ու լիարժեք պայմաններ:

Համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող մեր երեխաների համար ստեղծված են կրթության, դաստիարակության, հանգստի, անվտանգ միջավայրի ապահովման բոլոր պայմանները, և տեղական իշխանությունը անում է հնարավորը, որպեսզի մեր երեխաներն ունենան լիարժեք մանկություն:

Նրանց համար են գործում մարզական, մշակութային, արվեստի ու երաժշտական համայնքային օջախները, նրանց ազատ ժամանցի կազմակերպման համար իրականացվել ու այսուհետ էլ իրականացվելու են բազմաթիվ ծրագրեր:

Չմոռանանք, որ հունիսի 1-ը ոչ միայն Ժպիտների, շնորհավորանքների օր է, այլ նաև պատասխանատվության, հոգատարության դրսևորման առանձնահատուկ օր, որը ևս մեկ անգամ հիշեցնում է մեծահասակներիս երեխաների հանդեպ ունեցած պարտականությունների մասին, ու «Ամենալավը՝ երեխաներին» կարգախոսն էլ իրողություն դարձնելու համար մեզանից յուրաքանչյուրն ունի իր դերակատարումը:

Բազմաթիվ ցանկությունների շղթայում առաջնայինն այն է, որ յուրաքանչյուր երեխա ապրի ու մեծանա ընտանիքում, դաստիարակվի ջերմ և փոխադարձ ըմբռնման մթնոլորտում, հնարավորություն ունենա իր փոքրիկ աշխարհը դարձնել լուսավոր ու պայծառ, որպեսզի մանկության գույները լինեն պայծառ, որպեսզի մեր երեխաները ապրեն բարեկեցիկ ու ապահով պայմաններում, լինեն հասկացված ու սիրված՝ շրջապատված ուշադրությամբ և հոգատարությամբ:

Միրելի երեխաներ,

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու կողմից շնորհավորում եմ ձեզ այս տաք ու պայծառ օրվա առթիվ, թող մանկության ձեր մոլորակում շուրջտարին արև լինի ու ջերմություն, եղեք շրջապատված ձեր ծնողների ու հարազատների սիրով, դարձեք նրանց հպարտությունը, վայելեք առողջ, խաղաղ ու անհոգ մանկություն՝ ձեր ընտանիքներին ու շրջապատին պարգևելով անսպառ երջանկություն, ձեզանով իրենց կյանքն իմաստավորելու անսահման բերկրանք:

Իսկ մենք՝ մեծահասակներս, անելու ենք հնարավորը, որպեսզի դուք մեծանաք ներդաշնակ ու առողջ միջավայրում, լինեք պաշտպանված, ապրեք խաղաղ երկնքի տակ: